անկանի և կորնչի, ըստ բանին մարգարէի որ ասաց թէ անցի և ոչ տեսի, հարցուցի և ոչ գտայ տեղի նորայ. և այսպիսի իշխանաբար ինքնակալ անձամբ թագաւորութիւնք անցին 'ի վերայ աշխարհին և 'ի վերայ ազգին մերոյ բազումք, այլ կատարածն թողին մեզ որբ և այրի պարտաւոր վասն ինքնակամ գործոց անօրէնութեանց իւրեանց և հատուցանող փոխանակ միոյ անօրէնութեան պարտուց նոցայ հարիւրապատիկ ծառայութեամբ մեզ. ուրեմն մի խաբեցաք կրկին և մի տայք տեղի անօրէնութեան հովուաց մերոց, և մի կրկին ցանեսցուք որոմն անօրէնութեան ընդ աշխարհս մեր, զի աւերեսցէ արան ցորենոյ ազատութեան մերոյ և կատարածն մատնեսցի սերունդս մեր 'ի ներքոյ լծի ծառայութեան, որպէս այժմ մատնեալ կամք, այլ հարկաւոր է և յոյժ հարկաւոր, զի արիասցուք ազատապէս, և գոսի Օրինաց և արդարութեան ընդ մէջ ածցուք, ընտրեսցուք մեզ բարիս քաղցրահամ և դիւրաճաշակ յօրէնս անխախտելիս, այն որ հրամայեցաւ 'ի Տեառնէ արարչէն մերմէ՝ պահել 'ի ամենայն տեսակէ պտղոյ որում տկարացուցանէ հոգի և մարմին ճաշակողին, և միաբան ընդունեսցէք կալ և մնալ հաստատուն 'ի վերայ պահելոյ Օրինաց մերոց, որում ազդեցութեամբ սուրբ հոգոյն շառաւեղելով 'ի վերայ բանական հոգւոյ մերոյ՝ ընտրեսցուք և հաւանեսցի ընդ մէջ